ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՄԱՏՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Bookmark

Տիգրան Հայրապետյան

ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՄԱՏՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Քաղաքական վերլուծություններ

ՀԱՏՈՐ 2

Bookmark

new mag

ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 32
ԳՄԴ 66.0
Հ 300

Հ 300 Հայրապետյան Տիգրան
Երրորդ աշխարհամարտի մատույցներում /
Տ. Հայրապետյան.- Եր.: Newmag, 2022.
ՀԱՏՈՐ 2.- 596 էջ:

Տիգրան Հայրապետյանի երկերի 2-րդ հատորի գաղափարական առանցքում աշխարհի շրջապտույտն է՝ հնարավոր նոր, մեծ պատերազմի ուրվականով, որի թելադրանքով հայկական պետության համար կարևորագույն փորձություն են հարաբերությունները Ռուսաստանի, Արևմուտքի և Միջին Արևելքի հետ:

«Ռուսական խռովք կամ վերադարձող կայսրության ուրվականը» խորագրով 1-ին մասում քաղաքագետը վերլուծում է Ռուսաստանի անցյալն ու ներկան, կանխատեսում ապագա իրողությունները՝ նոր միջպետական միությունը, Հայաստանի դերը, ակնկալիքներն ու գլոբալ ռիսկերը:

2-րդ՝ «Աշխարհքաղաքական ծուղակ» բաժնում հեղինակը խորհում է ԽՍՀՄ փլուզումից ի վեր ամերիկյան քաղաքական կուրսի ուղղվածության, Եվրոպական միասնության ավարտի, ազգամիջյան հակամարտությունների տրամաբանության և նոր աշխարհակարգի նշմարվող սահմանների շուրջ, դիտարկում պատերազմի և խաղաղության սահմանագիծը:

ՀՏԴ 32
ԳՄԴ 66.0

Գիրքը հրատարակվել է ՀՀ Նախագահ
Վահագն Խաչատուրյանի
ֆինանսական աջակցությամբ:

ISBN 978-9939-884-69-1
Տիգրան Հայրապետյան «Երրորդ աշխարհամարտի մատույցներում»
© 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և Տիգրան Հայրապետյանի մտավոր սեփականության իրավատեր Նազենի Ղարիբյանին:

Բովանդակություն

Չհայտարարված աշխարհամարտ 7

Մաս I Ռուսական խռովք
կամ վերադարձող կայսրության ուրվականը 19

Գլուխ 1 Հետխորհրդային ցնցումների
էությունը 21
Գլուխ 2 Թակարդ ռուսական
ժողովրդավարության համար 107
Գլուխ 3 Ռուսաստանը վերադառնում է
ի շրջանս յուր 216

Մաս II Աշխարհքաղաքական ծուղակ 315

Գլուխ 1 Փարիսեցիության ամերիկյան կերպը 317
Գլուխ 2 Եվրոպական միասնության
ավարտական ակորդը 358
Գլուխ 3 Երրորդ աշխարհի արյունոտ
ուրվականը 419
Գլուխ 4 Նոր աշխարհամարտն
անխուսափելի է 541

BookMark

Չհայտարարված աշխարհամարտ. ավանդական հակադրություն երկու աշխարհների միջև

Նախաբանի փոխարեն

«Երրորդ համաշխարհայինի» սկիզբը

Խորհրդային վերակառուցումով ավարտվեց «սառը պատերազմը», և սկսվեց մի ընթացք, որը հասունացման այսօրվա աստիճանում կարելի է գնահատել իբրև չհայտարարված աշխարհամարտ: Հիմնական գերտերությունները միավորված են ընդհանուր քաղաքական-գաղափարախոսական դաշինքի մեջ, իսկ հակառակորդի դերում ունեն ոչ թե ընդհանուր շահերով միավորված տերությունների ձևավորված դաշինք, այլ «սառը պատերազմում» կրած պարտությունից հետո իրենց ներքաղաքական առանցքից շեղված ու արտաքին կողմնորոշումներում տենդագին տատանումներ ապրող առանձին մեկուսացված մրցակիցներ: Քաղաքական ու ռազմական միջոցների կիրառմամբ աշխարհամարտը ծավալվում է Բալթիկայից մինչև Կարմիր ծով, Հյուսիսային Աֆրիկայից մինչև Հընդկաչին: Պայքարի կիզակետում գաղափարախոսությունների և արժեքների համակարգի բախումն է, որտեղ հիմնական ուղղություններում ընդհանուր հայտարարի եկած Արևմուտքը փորձում է վերջնականապես սանձել հոգեբարոյական ինքնության կայուն ավանդույթներ ունեցող, դրանով քաղաքականապես խիստ անկախ միկրոաշխարհները՝ ուղղափառ Ռուսաստանն ու արաբա-մահմեդական Արևելքը:

Թեև 20-րդ դարի հիմնական դիմակայությունն ընթանում էր խորհրդային համակարգի և «ազատ աշխարհի» միջև, իսկ մնացած հակամարտություններն ածանցվում էին դրան, սակայն Երկրորդ աշխարհամարտից հետո գաղութատիրությունը թոթափած արաբա-մահմեդական Արևելքը տասնամյակների ընթացքում ձևավորվեց իբրև ինքնուրույն բևեռ՝ ինքնադրսևորման սեփական կարողություններով, հատկապես Իրանում Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո: Սա միակ տարածքն էր, որտեղ Արևմուտքի և ԽՍՀՄ հաջողությունները խիստ հարաբերական էին, քանզի նրանք չկարողացան պարտադրել և արմատավորել իրենց արժեքների համակարգը: Ավելիին հասնելու անկարողությունից էր, որ Արևմուտքը, ոտնահարելով սեփական սկզբունքները, դաշնակցում էր կրոնամոլ, ավտորիտար վարչակարգերի հետ, իսկ խորհրդային համակարգն աչք էր փակում «սոցիալիզմ» տերմինին զուգորդող «արաբական» և «իսլամական» մակդիրների վրա: Այսօր արաբա-մահմեդական Արևելքը վտանգավոր է Արևմուտքի համար ոչ միայն այն պատճառով, որ, նույնիսկ, զրկվելով ԽՍՀՄ դաշնակցությունից, ի զորու է դիմադրել արևմտյան էքսպանսիային, այլև այն պատճառով, որ սա այն տարածքն է, որտեղ սեփական ինքնության վերականգնման և իբրև գերտերություն կրկին դրսևորվելու փուլում առավելագույն աջակցություն և ըմբռնում է գտնելու Ռուսաստանը:

Արմատապես միմյանց հակադրվող այս երկու աշխարհներն ունեն մի խիստ կարևոր միավորիչ գործոն՝ պատմական ավանդականությամբ ամրացված հակաարևմտականությունը: Չեզոքացնելով արաբա-մահմեդական աշխարհը՝

Արևմուտքն առավելագույնս կմեկուսացնի Ռուսաստանը՝ սահմանափակելով նրա հավակնությունները նախկին ԽՍՀՄ շրջանակներով: Մենք արդեն ներկայացրել ենք մեր տեսակետներն Արևելքի դեմ տարվող պայքարի և նրա երկու ճակատների վերաբերյալ [տե՛ս այս հատորի երկրորդ մասում]: Ուստի անդրադառնանք Ռուսաստանին և նրա հետ կապված ռազմաքաղաքական խնդիրներին:

Ռուսաստանը խարխափում է

Ռուսաստանի ներկայիս աշխարհքաղաքական ընտրությունը վերջնական չէ, իսկ ավելի ճիշտ՝ այն ընդհանրապես չկա: Առայժմ տեղի են ունենում ռուսական ճգնաժամերին հատուկ մեծանկյուն տատանումներ, որոնց ապագան խիստ անկանխատեսելի է: Դա հրաշալի հասկանում են և՛ Արևմուտքի, և՛ նախկին ԽՍՀՄ քաղաքական դիտորդներն ու պետական առաջնորդները: Ելցինի վարչակարգը չի ներկայացնում այն Ռուսաստանը, որի վերականգնմանը ծայրահեղ մտավախությամբ կամ մեծ անհամբերությամբ սպասում են աշխարհում: Արմատական փոփոխությունները «միջուկային մահակ» ունեցող այդ երկրում կանխատեսում են շատերը, բայց ճիշտ եզրահանգումներն ու առավել ևս կոնկրետ գործողությունները հատուկ են առանձին երկրներին: Այո՛, Արևմուտքը շատ բան է անում Ռուսաստանն ազատ աշխարհի ոլորտում պահելու և ապագայում «ռուսական գործոնի» վերականգնման սպառնալիքը չեզոքացնելու ուղղությամբ: Նա նույնիսկ պատրաստ է «Մեծ յոթնյակը» դարձնել «Ութնյակ»: Գերադասում է խոշոր ծախսերի գնով վերահսկել նրան և ապահովել իտալական կամ կանադական տարբերակի մեծ տերության

նրա դիրքն աշխարհում: Սակայն Ելցինի իշխանության մեկ և գայդարյան բարեփոխումների կես տարիների ընթացքում ոչ մի էական առաջընթաց չի նկատվել: Արևմտյան դիտորդներն ու փորձագետները հուսահատ մտահոգություն են հայտնում Ռուսաստանի ապագայի վերաբերյալ, արդարացիորեն նշելով, որ դեմոկրատացման և տնտեսական կայունության հիմքերը կառուցելու ժամկետներն անսահմանափակ չեն, իսկ ներկայիս վարչակարգն արմատական, անդառնալի գործընթացներ իրականացնելու ընդունակ չէ: Արևմուտքի համար դա նշանակում է միայն մի բան՝ Ռուսաստանը կարող է կրկին վերադառնալ միայն իրեն ընկալելի սեփական ինքնության «ռուսական ուղուն», որի անխուսափելի բաղկացուցիչ մասն է կազմում հակաարևմտականությունը: Անսպառ լավատեսությամբ աչքի ընկնող Արևմուտքը, միաժամանակ, չի կորցնում զգոնությունը և չի բացառում, որ Ռուսաստանի ապագան կարող է ընթանալ հենց այդ ճանապարհով: Ուստի նա ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի այլևս երբեք ռուսական սպառնալիքը չվերականգնվի այն ծավալներով, որ կար նախակոմունիստական անցյալում, առավել ևս վերջին տասնամյակներում:

«Ռուսական ուղու» պատմությանը քիչ թե շատ ծանոթ ցանկացած փորձագետ գիտի, որ արտաքին քաղաքականության ոլորտում այն արտահայտվում է ծավալապաշտական ձգտումներով դեպի Ռուսաստանի կենսական շահերի ավանդական շրջանները: Արևմուտքում դա սլավոնական Եվրոպան է, հարավում՝ առաջին գծում Անդրկովկասի քրիստոնյա հատվածը, իսկ երկրորդ գծում՝ արաբա-մահմեդական Արևելքը: Բավական է, որ Ռուսաստանը վերականգնի

իր ազդեցությունն այս տարածքներում, ռուսական գերտերության գործոնը կդառնա օրակարգի լիարժեք խնդիր: Սթափ գնահատելով իրադարձությունների զարգացումը, օգտագործելով Ռուսաստանի ներկա վարչակարգի արևմտամետ հակվածությունը և, որ ամենակարևորն է, բացառիկ հնարավորություն ունենալով ռուսական ուժերով կատարել սև աշխատանքը՝ Արևմուտքը գործողություններ է ծավալել բոլոր ուղղություններով: Ռուսաստանի շուրջը սանիտարական գծի ստեղծումն իրականացվում է ամբողջ թափով, թեև ռուս դիտորդները միայն մտահոգություն են հայտնում նման ապագայի վերաբերյալ: Արաբա-մահմեդական Արևելքի մասին արդեն խոսվել է, և միայն անհրաժեշտ է ավելացնել, որ արևմտամետ թյուրքական մենաքարը երկակի օգտագործման հեռանկար ունի.

ա. ներկա փուլում դա «կափարիչ» է Արևելքի համար և ծառայում է իրանական ճակատում մղվող պայքարին,

բ. հեռանկարում նա կարող է թափարգել լինել Ռուսաստանի և Արևելքի միջև:

Արևելյան Եվրոպա. սլավոններ և ոչ սլավոններ

Վերջին յոթ տարիների խորհրդային համակարգի փլուզումից հետո Արևմուտքի երկրորդ ամենամեծ քաղաքական հաջողությունը պետք է համարել արևելասլավոնական եռյակի՝ վելիկոռուսների, մալոռուսների և բելոռուսների պառակտումն առանձին պետությունների: Այս երեքի բազմադարյան միությունը ռուսական գործոնի ամրության ավանդական հիմքն էր: Սլավոնական աշխարհի երկրորդ գիծը կազմում են այն երկրները, որոնց ժողովուրդները պատմական-ավանդա-

կան անբարյացակամություն են տածում Ռուսաստանի նկատմամբ: Ուստի լեհերն ու չեխերը Եվրոպայի հետ իրենց կրոնական ընդհանրությամբ և կոմունիստական Ռուսաստանի գերիշխանության մռայլ հիշողություններով ապագայում նրա համար հենարան լինել չեն կարող: Ինչ վերաբերում է ոչ սլավոն ժողովուրդներին, ապա ռումինացիները, մոլդովացիներն ու բալթյան ժողովուրդները չորս տասնամյակ ատելությամբ էին լցված ռուսական «գաղութարարների» դեմ և այժմ օր առաջ պատրաստ են ազատվել ամեն տեսակ ազդեցությունից: Ստեղծվել է մի հոգեբանական իրավիճակ, երբ այդ տարածքներում Ռուսաստանի ազդեցության վերականգնման ցանկացած փորձ նշված ժողովուրդների կողմից կընկալվի իբրև վերջնական բնաջնջման սպառնալիք: Այնուամենայնիվ, Եվրոպայում կա երկու ժողովուրդ, որոնք եղել և կարող են լինել Ռուսաստանի ռազմաքաղաքական հենարանը: Դրանք ուղղափառ սլավոններն են՝ սերբերն ու բուլղարացիները:

Թուրք-մահմեդական սահման

Արևելքում հակառուսական սահմանագծի իրավիճակը գրեթե նույնն է: Թյուրք-մահմեդական ժողովուրդներին հետևողականորեն միավորելով թյուրքական ընդհանրության մեջ՝ Արևմուտքը զգուշորեն թուլացնում է երկու հարյուրամյակների ընթացքում արմատավորված ռուսական ազդեցությունը: Նա չի կարող արագընթաց և կտրուկ միջոցառումների դիմել կամ բացահայտ ճնշում գործադրել, ինչպես դա անում է բալթյան հանրապետությունների և եվրոպական մասի այլ խնդիրներում, որովհետև.

ա. քանի դեռ Ռուսաստանը վերջնականապես հեռացված չէ Եվրոպայից, անհրաժեշտ է բաց պահել «արևելյան մի-

ջանցքը»՝ ռուսական մեծապետության ժամանակավրեպ, անցանկալի ընդվզումներից խուսափելու համար: Պետք է մինչև վերջին պահը սնուցել այն պատրանքը, թե զիջելով Եվրոպայում, Ռուսաստանը հավասարի իրավունքով ընդարձակում է իր արևելյան քաղաքականությունը: Ի վերջո, եթե նույնիսկ ստրատեգիական ծրագիրը որոշ ուղղություններում պետք է տապալվի, ապա գերադասելի է «վերածնված Ռուսաստանի» ծավալապաշտությունն Արևելքում, քան Եվրոպայում: Եվ հետո, Ռուսաստանի հաջորդ վերադարձը Միջին Ասիա և Ադրբեջան կարելի է վերածել նոր աֆղանական պատերազմի, ինչը նրա համար այնքան էլ հեշտ չի լինի հաղթահարելը:

բ. Արևելյան ճակատում Ռուսաստանն առայժմ անչափ օգտակար դեր է խաղում նորաստեղծ մահմեդական պետությունների աշխարհիկ վարչակարգերը պաշտպանելու գործում: Քանի դեռ առկա է Իրանի ազդեցության տարածման վտանգը, Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայությունը խիստ անհրաժեշտ է:

գ. Արևելքում Ռուսաստանի դեմ կտրուկ քայլերի կարելի կլինի դիմել միայն, երբ նա վերջնականապես կհեռացվի եվրոպական տարածքներից: Արևմուտքը կլուծի իր խնդիրներն արաբա-մահմեդական աշխարհում և վերջացրած կլինի թյուրքական մենաքարի կառուցումը: Ընդորում, վերջին երկուսին Ռուսաստանի վարչակարգն այսօր ծառայեցնում է իր բոլոր ռազմաքաղաքական հնարավորությունները: Սակայն արևելյան ուղղությամբ ևս կա երկու ժողովուրդ՝ ուղղափառ հայերն ու վրացիները, որոնք, ավանդաբար ռուսական զենքից ու քաղաքա-

կանությունից ամենածանր հարվածները ստանալով հանդերձ, հետևողական հավատարմություն են ցուցաբերում Ռուսաստանի նկատմամբ՝ ընդունելով նրան իբրև իրենց փրկության վերջին խարիսխ:

Բալկաններում խփում են ռուսական հենարաններին Հայտնի չէ, որքան ժամանակ անց Ռուսաստանը կվերադառնա «իր ուղուն»: Եթե անկեղծ լինենք, ապա ցանկալի է, որ դա ընդհանրապես տեղի չունենա, որովհետև հերթական ռուսական փորձարկմանը զոհ են գնալու միլիոնավոր մարդիկ, տասնյակ ժողովուրդներ, և նրա միջուկային «մահակի» ստվերից կրկին դողալու է ողջ աշխարհը: Ռուսաստանի ներկա վարչակարգն ու Արևմուտքը համատեղ պայքարում են այն ապագա «իսկական Ռուսաստանի» դեմ, որի ստվերից հավասարապես սարսափում են երկուսն էլ: Վերջին երկու տարիների իրադարձությունները Բալկաններում և Անդրկովկասում ստիպում են տրամաբանական կապ տեսնել Ռուսաստանի ավանդական դաշնակիցների դեմ կիրառվող քաղաքականության մեջ: Արևմուտքը հետևողականորեն ոչնչացնում է ռուսական ազդեցության տարածման հնարավոր հենարանները, և այսօրվա ռուսական վարչակարգն օժանդակում է նրան այդ գործում: Նորագույն ժամանակներում, իրաքյան պատերազմից հետո, միջազգային հանրությունն իր կարողությունների ողջ ուժով հարվածում է նախկին Հարավսլավիայի առանցքը կազմող ռուսամետ սերբ ժողովրդին և նույնքան ռուսամետ հայերին: Հարավսլավիայի փլատակների վրա կերտվում են կաթոլիկա-բողոքական Սլովենիան ու Խորվաթիան, մահմեդական Բոսնիան, որոնցից

երկուսն ավանդականորեն հակված են դեպի Արևմուտք, իսկ երրորդը կներդաշնակի թյուրքական մենաքարի եվրոպա-կան հատվածի հետ: Պետականություն է ձեռք բերում բոլոր ժամանակների Բալկանների կռվախնձորը՝ Մակեդոնիան, որը թյուրքական հզոր գործոնի հետ միասին ազդեցիկ լծակ է բուլղարացիների հնարավոր ռուսամետ դրսևորումների դեմ: Արևմուտքը հյուծում է սերբերին՝ պատրաստ իրաքյան սցե-նարը կիրառել նրանց նկատմամբ: Արդեն այսօր Սերբիան իր տարածքներով հասել է նվազագույնի, իսկ ի՞նչ կլինի, եթե Արևմուտքի աջակցությամբ նրանից անջատվեն նաև ալբա-նացիներով բնակեցված Կոսովոն ու հունգարա-խորվաթա-կան բնակչություն ունեցող Վոևոդինան: Եթե նույնիսկ վեր-ջինը տեղի չունենա, ապա գործադրվող պատժամիջոցներն ու ձգձգվող ազգամիջյան պատերազմը երկար ժամանակով կչեզոքացնեն Սերբիան, և նա կդադարի գոյություն ունենալ որպես լիարժեք ռազմաքաղաքական գործոն:

Հայաստան և Վրաստան. Ռուսաստանի ճարահատյալ բարեկամներ

Գրեթե նույն տարբերակը գործում է նաև Հայաստանի դեմ: Բացի նրանից, որ Հայաստանն ու «Հայկական հարցը» խո-չընդոտում են Արևմուտքի ստրատեգիական ծրագրերին Արևելքում, նա դատապարտված է նաև իբրև տարածաշըր-ջանում ապագա «վերածնվող Ռուսաստանի» հնարավոր հե-նակետ: Ոչնչացվում է հանրապետության՝ առանց այդ էլ աղ-քատիկ տնտեսությունը, հայաթափվում է ԼՂՀ-ն, առկա է Հա-յաստանի հարավը թյուրքական մենաքարին «նվիրաբերե-լու» սպառնալիքը: Հարցականի տակ է դրված ոչ միայն ԼՂՀ